ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

civilcontract.byureghavan@gmail.com

№ Ե-24/24

«18» նոյեմբերի 2024թ.

ՀՀ Կոտայքի մարզի
Բյուրեղավանի համայնքապետարանի
Աշխատակազմի քարտուղար Լ. Ավուշյանին

Համաձայն ՀՀ ՏԻՄ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի՝ այն է՝, «Աշխատակազմի քարտուղարը կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը», դիմում եմ Ձեզ՝ աջակցելու ինձ հետևյալ հարցը դարձնել համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգային հարց. Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի երեխաների կրթական կարիքները լուծման համար ստեղծել «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցը, որը նշանակալի ազդեցություն կունենա համայնքի կրթության զարգացման և երիտասարդների ապագայի վրա:

Այս նախաձեռնությունը կարող է լուծել մի շարք կարևոր խնդիրներ, որոնք նշված են ստորև.

1. Շատ երեխաներ ստիպված են լինում մեկնել մայրաքաղաք՝ քաղաքային կրթական հաստատություններում ճարտարագիտական կրթություն ստանալու համար, ինչը խոչընդոտում է նրանց զարգացմանը և իրենց համայնքի մեջ մնալուն: «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցը կներկայացնի լուծում՝ ապահովելով երեխաներին որակյալ, անվճար և հասանելի կրթություն հենց իրենց համայնքում, առանց հարակից քաղաքներ մեկնելու անհրաժեշտության: Անվճար կրթությունն այնպիսի գործոն է, որը կարող է շատ երեխաներին և նրանց ընտանիքներին թույլ տալ ավելի լիարժեք զարգանալ:

2. Երեխաները տեղում կկարողանան մասնակցել ճարտարագիտական դասընթացների, բիզնեսի զարգացման ինովացիոն լուծումների մասին մրցույթների ու ճամբարների: Մրցույթները և ճամբարները երեխաներին հնարավորություն կտան ստուգել իրենց գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև մրցակցելու հասակակիցների հետ:
3. «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցը նաև ոչ ֆորմալ կրթություն է, որը կախված չէ դասական կրթական համակարգից: Երեխաները կարող են ազատորեն մասնակցել ծրագրերին, որոնք կնպաստեն նրանց գործնական գիտելիքների և հմտությունների զարգացմանը՝ խթանելով ստեղծարարությունը, քննադատական մտածողությունը և խմբային աշխատանքի կարողությունները:

«Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցը Բյուրեղավանում հանդիսանում է շատ հեռանկարային նախաձեռնություն, որը կարող է լուրջ փոփոխություններ բերել երեխաների կրթության և համայնքի զարգացման մեջ: Այն ոչ միայն կլուծի համայնքի երեխաների կրթական խնդիրները, այլ նաև կխթանի տեխնոլոգիական ու ինովացիոն ոլորտի աճը՝ ապահովելով կայուն հիմքեր՝ համայնքի երկարաժամկետ զարգացման համար:

Համայնքապետարանը ունի մեծ հնարավորություն՝ աջակցելու այս ծրագրին՝ տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Հաճախ համայնքների սոցիալական և կրթական խնդիրները հնարավոր է լուծել համատեղ ջանքերով, երբ տեղական իշխանությունը դառնում է ակտիվ գործընկեր: Համայնքապետարանի կողմից այս նախաձեռնությանը տրամադրված ֆինանսական աջակցությունը կդառնա սկիզբ այնպիսի մեծ փոփոխությունների, որոնք կպայմանավորեն համայնքի երիտասարդության ապագան ու նրա կայուն զարգացումը: Արդյունքում կունենանք զարգացած անհատ, զարգացած համայնք, զարգացած երկիր:

Նախագծի նախահաշվին կարող եք ծանոթանալ՝
https://drive.google.com/file/d/1H44GCWPZUSxxQ5d6-aHQDTpYkWsfqXRO/view;
Առդիր՝ 1 էջ:

Ավագանու անդամ՝ Ա. Վարդանյան